



**ՀՀ ՋՈՒ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ**

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ
	1	2
1.	<p>Հրդեհի մարման փրփուր կամ համանման միացություններ (Փրփրահեղուկ ՈՕ-6 P3 )</p>	<p>ՈՕ-6 P3 փրփրահեղուկը (200-300լ պոլիէթիլենային կամ պոլիմերային տարաներով) միատար է, առանց նստվածքի և շերտավորման:  Արտադրվում է ըստ ТУ 2481-0001-78148123-2005, համապատասխանում է ГОСТ P50588-2012:  Կինեմատիկական մածուցիկությունը +20°C ջերմաստիճանի դեպքում ոչ ավել 100 մմ<sup>2</sup>/վրկ:  6% ծավալային մասնաչափով աշխատանքային լուծույթի փրփուրի պատիկությունը.  - ցածրը՝ 20 ից ոչ ավել,  - միջինը՝ 60 -ից ոչ պակաս,  - բարձրը՝ 200-ից ավել:  6% ծավալային մասնաչափով աշխատանքային լուծույթից ստացված միջին պատիկության փրփուրով 0.032±0.002 դմ<sup>3</sup>/մ<sup>2</sup>վրկ ինտենսիվության մատուցման դեպքում H-հեպտանի (ГОУС Ռ 50588-2012-ով բենզին, մակնիշը նորմալ 80) մարման ժամանակը, ոչ ավել 300 վրկ: Պահպանման երաշխիքը թողարկման օրվանից 120 ամիս: Մատակարարման ժամանակ մատակարարը ներկայացնում է արտադրող կազմակերպության կողմից ապրանքատեսակի համապատասխանության սերտիֆիկատը:  Տարան պիտակավորված է: Պիտակին նշվում է պահպանման երաշխիքային ժամկետի, արտադրող կազմակերպության, արտադրման ժամկետի վերաբերյալ տեղեկատվություն: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ ուշ քան վեց ամիս:</p>

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏՎԱՆԻՇԸ
2.	<p>Ցուցափեղկեր (պահարաններ) (Մետաղյա, փեղկերով հրշեջ վահանակ)</p> 	<p>Հրշեջ վահանակը նախատեսված է հրշեջ գույքը և միջոցները պահելու համար: Չափսերն են. -բարձրությունը՝ 1500մմ, երկարությունը՝ 1500մմ. -լայնությունը՝ 330 մմ (վերևի մասից), 700 մմ (ներքևի մասից): Վահանակի ցանցապատ դռների բարձրությունը 950±50մմ, լայնությունը 72±30մմ: Վահանակը ներկված է կարմիր գույնի ներկով: Մետաղյա իրանով, երկհարկանի կառուցվածքով, վերևի մասի դռները և հետին մասը ցանցապատ, իրանի ներսում՝ երեք հավասարաչափ շարքերով տեղադրված են երեքական կախիչ հրշեջ գույքը կահավորելու համար: Ներքևի դարակը նախատեսված է ավազի համար: Այն թիթեղապատ է, չափսերն են՝ երկարությունը 1500 մմ, լայնությունը 350մմ, բարձրությունը դիմացի կողմից 380 մմ, հետևի կողմից 500 մմ: Այն ծածկվում է 2 կափարիչով: Կափարիչներն ամրացված են երկուական ծխնիներով, որոնց վրա տեղադրված են մեկական բռնակ: Վահանակի ներքևի (հատակի) մնացած մասը ցանցապատ է: Հատակի և կափարիչի թիթեղի հաստությունը ոչ պակաս 1.5 մմ, իսկ մնացած մասերում ոչ պակաս 1.2 մմ: Ցանցի ճաղերի տրամագիծը 2.5 մմ-ից ոչ պակաս: Վանդակների չափսերը ոչ ավել 40 X 40 մմ: Անկյունակների չափսերը 25-ից 32 մմ: Վահանակը ունի 6 մետաղյա ոտք, 50-70 մմ բարձրությամբ, որոնք տեղադրված են վահանակի հատակի անկյունների եզրերերի, դիմացի ու հետին եզրագծերի միջնամասերում: Վահանակի հետին մասի աջ և ձախ անկյուններում, ներքևի անկյունակի ստորին մասից 75-ից 100 մմ բարկության վրա՝ 200 X 200 մմ չափսերով տեղադրվում են թիթեղյա տակդիրներ՝ կրակմարիչների կահավորման համար: Դատարկ վահանակի քաշը 55±5 կգ: Լրակազմում ընդգրկվում է. կացին - 1հատ՝ քաշը 1.2±0.2 կգ, պոչը փայտյա կարմիր գույնի ներկած, երկարությունը 420±30 մմ, սրածայր մասը 130±10մմ: Պողպատյա սրածայր բահ - 1 հատ՝ փայտյա պոչով, կարմիր գույնի ներկած: Բահի գաբարիտային չափսերն են՝ երկարությունը 1450մմ, լայնությունը 220 մմ: Երկաթյա լինգ՝ 1հատ, երկարությունը 1300±100 մմ, տրամագիծը 24±2 մմ: Կեռածող՝ 1 հատ, երկարությունը 1450 մմ, տրամագիծը 20±2մմ: Դույլ՝-2 հատ պատրաստված 0.5-1 մմ հաստությամբ թիթեղից, կոնաձև 7.5 լ-ից ոչ պակաս տարողությամբ, կարմիր գույնի ներկած, քաշը ոչ ավել 1.5 կգ-ից: Թույլատրելի շեղումները՝ 2%:</p>

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ
3.	Կրակմարիչներ ԱԿ-55	<p>ԱԿ-55 կրակմարիչը (նախկին ԱԿ-80) նախատեսված է BC դասի հրդեհների և մինչև 10000 Վ լարման տակ գտնվող էլեկտրական սարքավորումների մարման համար: Տեղադրված է անվասայակին:</p> <ul style="list-style-type: none"> <li>- գաբարիտային չափերը (մմ) - 3x159x1400,</li> <li>- հրդեհամարման նյութը՝ երկօքսիդ ածխածին CO<sup>2</sup>,</li> <li>- լցավորված կրակմարիչի քաշը 230 կգ,</li> <li>- լիցքի քաշը 52,20 կգ,</li> <li>- հրդեհամարման հնարավորությունը՝ 144B (4,52 մ<sup>2</sup>) ,</li> <li>- շիթի երկարությունը՝ 4 մ,</li> <li>- կրակմարիչը շահագործվում է -40°C ից +50°C:</li> </ul> <p>Թույլատրելի շեղումները՝ 2%:</p> <p>Մատակարարման ժամանակ մատակարարը ներկայացնում է արտադրող կազմակերպության կողմից ապրանքատեսակի համապատասխանության սերտիֆիկատը:</p> <p>Կրակմարիչի իրանը պիտակավորված է: Պիտակին նշվում է անվանման նշանակության, օգտագործման, անվտանգության կանոնների, պահպանման, տեղափոխման, արտադրող կազմակերպության, արտադրման ժամկետի, տեխնիկական պայմանի, հրդեհների մարման դասի և քաշի մասին տեղեկատվություն: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ ուշ քան երեք ամիս:</p>
4.	Հրդեհի մարման ձեռքի գործիքներ (Հրշեջ կացին)	<p>Հրշեջ կացին - քաշը 1.2±0.2 կգ, պոչը փայտյա, կարմիր գույնի ներկած: Երկարությունը 420մմ±30մմ, սրածայր մասը 130 ±10 մմ, սայրի բարձրությունը - 0,07 մմ:</p> <p>Ապրանքատեսակի համար որակի սերտեֆիկատը կիրառելի չէ:</p>
5.	Հրդեհի մարման ձեռքի գործիքներ (Հրշեջ բահ)	<p>Հրշեջ 2մմ հաստությամբ պողպատյա սրածայր բահը նախատեսված է նոր սկսվող հրդեհի մեկուսացման համար՝ հրդեհի օջախին ավագ գցելու և այլ հրդեհաշիջման աշխատանքներ կատարելու համար: Սրածայր փայտյա պոչով բահի գաբարիտային չափսերն են՝ երկարությունը 1450մմ, լայնությունը 220մմ: Քաշը ոչ ավել 3.5 կգ: Բահի պոչը ներկված է կարմիր գույնի ներկով: Թույլատրելի շեղումները՝ 2%:</p> <p>Ապրանքատեսակի համար որակի սերտեֆիկատը կիրառելի չէ:</p>
6.	Հրդեհի մարման ձեռքի գործիքներ (Փողակ - D 51մմ)	<p>PC-50 տեսակի փողակը նախատեսված է հրդեհների օջախը լրիվ շիթով ջուր մղելու համար: Օգտագործվում են հրշեջ ներքին ծորակները կահավորելու համար: Փողակը պատրաստված է այլումինի խարնուրդից: ГОСТ 28352-89, ТУ 4854-013-10661317-2000:</p> <p>Փողակը նախատեսված է 51մմ փողրակին միանցնելու համար: Ծայրի ներքին տրամագիծը 13մմ, երկարությունը 300±60 մմ: Մանեկը համալրված է ռետինե միջադիրով: Թույլատրելի շեղումները՝ 2%: Փողակի մետաղական մասին դրոշմված է անվանումը: Փաթեթավորումը գարծարանային:</p> <p>Ապրանքատեսակի համար որակի սերտեֆիկատը կիրառելի չէ:</p>

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ
7.	<p>Ռետինափողակներ (Փողրակ Փ- 51մմ)</p> 	<p>Ռինիվերսալ РПК-Н/В տեսակի հրշեջ ճնշման փողրակ: ГР-50 տեսակի մանեկներով միացված: Փողրակի արտաքին մասը սինթետիկ մազաթելից է: Մանեկները համալրված են ռետինե միջադիրով: Փողրակի տրամագիծը կազմում է 51մմ: Յուրաքանչյուր կապի երկարությունը 20±1,0 մետր: ГОСТ Р 51049-97, ТУ 8193-001-46303527-2004:</p> <p>Փողրակը նախատեսված է -60°C մինչև +40°C աշխատանքային ջերմաստիճանի ինտերվալով և մեղմ կլիմայական պայմաններում հրշեջ ներքին ծորակների համար: Աշխատանքային ճնշումը ոչ պակաս 0.3 ՄՊա: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ ուշ քան վեց ամիս: Թույլատրելի շեղումները՝ 2%: Փաթեթավորումը գործարանային: Ապրանքատեսակի համար որակի սերտեֆիկատը կիրառելի չէ:</p>
8.	Կրակմարիչ ԿՓ-2	<p>ԿՓ-2 (զ) տեսակի կրակմարիչը արտադրված է համաձայն ԳՕՍՍ Ռ 51057-2001, արտադրողի ՏՊ-ով: Այն նախատեսված է А, В, С, Е (մինչև 1000Վ) դասի հրդեհների մարման համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>- լիցքավորված փոշու կշիռը 2+/-0.1 կգ,</li> <li>- աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ 1,2 - 1,6 ՄՊա</li> <li>- մոդելային օջախի հրդեհամարման հնարավորությունը В դասի դեպքում պետք է լինի 21В, իսկ А դասի դեպքում 0.7А,</li> <li>- իրանի երաշխիքային ժամկետը ոչ պակաս 4 տարի,</li> <li>- լիցքավորված կրակմարիչի կշիռը 3,2+/-0,400 կգ,</li> <li>-կրակմարիչը շահագործվում է -40oC-ից +50oC ջերմաստիճանի պայմաններում:</li> </ul> <p>Չափսերը - տրամագիծը 110 +/- 20 մմ: Համապատասխանության սերտիֆիկատը արտադրող կազմակերպության կողմից պարտադիր է: Փաթեթավորումը գործարանային:</p> <p>Կրակմարիչի իրանը պիտակավորված է: Պիտակին նշվում է անվանման նշանակության, օգտագործման, անվտանգության կանոնների, պահպանման, երաշխիքային ժամկետի, արտադրողող կազմակերպության, արտադրման ժամկետի, տեխնիկական պայմանի, հրդեհների մարման դասերի և քաշի մասին տեղեկատվություն: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ ուշ քան երեք ամիս:</p>
9.	Կրակմարիչ ԿՓ-5	<p>ԿՓ-5 (զ) տեսակի կրակմարիչը արտադրված է համաձայն ԳՕՍՍ Ռ 51057-2001, արտադրողի ՏՊ-ով: Այն նախատեսված է А, В, С, Е (մինչև 1000Վ) դասի հրդեհների մարման համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>- լիցքավորված փոշու կշիռը 5+/-0.25 կգ,</li> <li>- աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանում 1.2-1.6 ՄՊա,</li> <li>- իրանի երաշխիքային ժամկետը ոչ պակաս 4 տարի,</li> <li>- կրակմարիչը շահագործվում է -40oC-ից +50oC ջերմաստիճանի պայմաններում: Փաթեթավորումը գործարանային:</li> </ul> <p>Համապատասխանության սերտիֆիկատը արտադրող կազմակերպության կողմից պարտադիր է: Կրակմարիչի իրանը պիտակավորված է: Պիտակին նշվում է անվանման նշանակության, օգտագործման,</p>

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏՎԱՆԻՇԸ
		անվտանգության կանոնների, պահպանման, երաշխիքային ժամկետի, արտադրողող կազմակերպության, արտադրման ժամկետի, տեխնիկական պայմանի, հրդեհների մարման դասերի և քաշի մասին տեղեկատվություն: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ ուշ քան երեք ամիս:
10.	Կրակմարիչ ԱԿ-2	<p>ԱԿ-2 տեսակի կրակմարիչը արտադրված է համաձայն ԳՕՍՍ Ռ 51057-2001, արտադրողի ՏՊ-ով: Այն նախատեսված է B, C, E (մինչև 1000Վ) դասի հրդեհների մարման համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>- լցավորված կրակմարիչի քաշը ոչ ավել 7,7 կգ,</li> <li>- լիցքը ոչ պակաս 1.90 կգ,</li> <li>- նախատեսվում է 21 B դասի հրդեհամարման համար,</li> <li>- երաշխիքային ժամկետը լիցքի համար 1 տարի, իսկ իրանի համար 5 տարի,</li> <li>- կրակմարիչը շահագործվում է -40oC-ից +50oC ջերմաստիճանի պայմաններում:</li> </ul> <p>Կրակմարիչի հետ տրվում է 1 հատ դուրս գցման լայնուկ փողակ և անձնագիր կամ շահագործման ձեռնարկ: Համապատասխանության սերտիֆիկատը արտադրող կազմակերպության կողմից պարտադիր է: Փաթեթավորումը գործարանային:</p> <p>Կրակմարիչի իրանը պիտակավորված է: Պիտակին նշվում է անվանման նշանակության, օգտագործման, անվտանգության կանոնների, պահպանման, երաշխիքային ժամկետի, արտադրողող կազմակերպության, արտադրման ժամկետի, տեխնիկական պայմանի, հրդեհների մարման դասերի և քաշի մասին տեղեկատվություն: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ ուշ քան երեք ամիս:</p>
11.	Հակահրդեհային վերմակներ (Հրշեջ թաղիք)	<p>Հրշեջ թաղիքը ПП-600: ТУ 4854-001-63453197-2009, ТУ 4854-001-93543472-2007: Այն նախատեսված է A, B, E դասի հրդեհների մարման համար: Օգտագործվում է մինչև 1000Վ լարման տակ գտնվող էլեկտրոհաղորդալարերի հրդեհների մարման համար: Աշխատանքային ջերմաստիճանը՝ մինչև 600oC, չափսերն են 1.5 x 2.0մ: Հրշեջ թաղիքը իրենից ներկայացնում է թերմոդիմացկուն կտավ, որն ծավալված վիճակում տեղադրվում է ջրադիմացկուն ծածկոցում (պատյանում): Թույլատրելի շեղումները 2%: Ծածկոցին նշվում է անվանման նշանակության, օգտագործման, կազմակերպության, արտադրման ժամկետի, հրդեհների մարման դասի մասին տեղեկատվություն: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ ուշ քան երեք ամիս:</p>